ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ
ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Առնակ Ավետիսյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավարի**
- **առաջին տեղակալ՝** **Վարշամ Սարգսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝** **Դիանա Գասպարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավարի**
- **առաջին տեղակալ՝** **Էդգար Հովհաննիսյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավարի**
- **առաջին տեղակալ՝** **Լյուդվիգ Յայլոյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Սաթենիկ Թովմասյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Ֆելիքս Պողոսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի հունիսի 23-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների բյուջետային եկամուտների պլանավորման կանոնակարգված գործընթացի մեթոդաբանության և այդ համատեքստում 2023 թվականի առաջին կիսամյակի բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին

/Վարազդատ Մկրտչյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ

/Վարազդատ Մկրտչյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

4. 2022–2024 թվականների ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և իրականացվելիք աշխատանքների մասին

/ Լիլիթ Մուշեղյան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ /

5. Կանխատեսված հնարավոր սակավաջրության պայմաններում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ոռոգելի հողատարածքներում ոռոգման ջրի հնարավորինս արդյունավետ և խնայողաբար օգտագործումն ապահովող միջոցառումների մասին

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ/

6. Հայտարարություններ՝

ա/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքաշինության և հողաշինության բնագավառներում առկա խնդիրների մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետ/

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի հունիսի 23–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ի 30–ի N647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի հունիսի 23–ի նիստի օրակարգը :**

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը զեկուցեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների բյուջետային եկամուտների պլանավորման կանոնակարգված գործընթացի մեթոդաբանության և այդ համատեքստում 2023 թվականի առաջին կիսամյակի բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին: Նա տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներին առաջարկվել է համայնքների բյուջեի եկամուտների եռամսյա համամասնությունները պլանավորել տարեկան պլանի 1/12-ի համամասնությամբ ըստ հաշվետու ամիսների: Առաջարկվում է նաև պետության կողմից համայնքներին տրամադրվող սուբվենցիոն գումարները բյուջեի եկամուտների մեջ պլանավորել ՀՀ կառավարության որոշումն ընդունվելուց հետո, բացառությամբ այն դեպքերի , երբ համայնքն ունի ֆոնդային բյուջեում ժամանակավորապես ազատ միջոցներ, որոնք կարող են օգտագործվել տվյալ ծրագրի իրականացման համար մինչև ՀՀ կառավարության որոշումն ընդունելը;
2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 6346213.7 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 5486943,0հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 859270.7 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 5179342,1 հազ. դրամ , 30,06,2022թ. հավաքագրված 4650121,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 529220,7 հազ. դրամով, կատարվել է 81,6%-ով, նախորդ տարվա 84,7%-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 1972387.4 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 2264870.6 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 292483,2 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի

հավաքագրումը կազմել է 1871255,5 հազ. դրամ , 30,06,2022թվականին հավաքագրված 1621902,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 249352,8 հազ. դրամով, կատարվել է 94,9%-ով, նախորդ տարվա 71,6%-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 444385,2 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 462431,1 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 18045,9 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 323698,3 հազ. դրամ , 30,06,2022թվականին հավաքագրված 279304,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 44393,9 հազ. դրամով, կատարվել է 72,8%-ով, նախորդ տարվա 60,4%-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 771853,1 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 864242,1 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 92389,0 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 763745,0 հազ. դրամ , 30,06,2022թվականին հավաքագրված 663501,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 100243,9 հազ. դրամով, կատարվել է 98,9%-ով, նախորդ տարվա 76,8 %-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 114077,8 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 116477,4 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 2399,6 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 133978,1 հազ. դրամ , 30,06,2022 թվականին հավաքագրված 109208,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 24770,1 հազ. դրամով, կատարվել է 117,4%-ով, նախորդ տարվա 93,8 %-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 38740,0 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 33150,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 5590.0 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 42151,6 հազ. դրամ , 30,06,2022 թվականին հավաքագրված. 39790,9հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 2360,7 հազ. դրամով, կատարվել է 108,8%-ով, նախորդ տարվա 120,0%-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 83722,0 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 98099,1 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 14377,1 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 78480,0 հազ. դրամ , 30,06,2022 թվականին հավաքագրված 71527,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 6952,9 հազ. դրամով, կատարվել է 93,7%-ով, նախորդ տարվա 72,9%-ի համեմատ:

2023 թվականի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 422732,3 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 464183,4 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 41451,1 հազ. դրամով, 20,06,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 407378,9 հազ. դրամ , 30,06,2022 թվականին հավաքագրված 328145,5 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 79233,4 հազ. դրամով, կատարվել է 96,4%-ով, նախորդ տարվա 70,7%-ի համեմատ

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն անդրադառնալով զեկուցմամբ ներկայացված տեղեկատվությանը՝ նշեց, որ այն ներկայացված է 20.06.2023-ի դրությամբ, հետևաբար ընթացիկ հավաքագրումները դեռևս կփոխեն արդյունքները: Նա նշեց, որ ընդհանուր հավաքագրումների տեմպը կայունացել է նախորդ տարվա համեմատ: Մարզպետն անդրադարձավ նաև այն փաստին, որ պետք է բյուջեի պլանավորումները ճիշտ իրականացնել, մի շարք խնդիրներից զերծ մնալու համար և մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց նույն տեմպերով և պատասխանատվությամբ շարունակել հավաքագրման աշխատանքները և մինչև կիսամյակի ավարտը ապահովել պլանավորված սեփական եկամուտների կատարողականը:

Օրակարգային երրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը: Համաձայն զեկուցմամբ ներկայացված տեղեկատվության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N3245-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2023 թվականի հունվարի 26-ի ՆՄՈ/34-2023 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից **<u>ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր</u>**

համայնքում 2023 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝(**http://armavir.mtad.am/)**:

Աշխատանքային խմբի կողմից իրավական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգերով:

Իրավական հսկողության արդյունքում կազմված հարցաշարով խախտումներն ու թերություններն արձանագրվել են ֆինանսների, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման, առևտրի և ծառայությունների, քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառներում:

Արձանագրված խախտումներն ու թերությունները Մեծամոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից վերացվել են և դրանց առումով ընդունվել են համապատասխան որոշումներ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում Մեծամոր համայնքում հայտնաբերված և արձանագրված ինքնակամ շինությունների մասով (Ակնալիճ գյուղում և Մեծամոր քաղաքում հեղուկ գազի լիցքավորման կետեր) իրավական կարգավորման խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի կողմից իրականացվող գործընթացն ընթացքի մեջ է:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջի համաձայն՝ ֆինանսների բնագավառում, որպես սեփական լիազորություն, համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Այս առումով թերի է կատարվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը և չնայած այն հանգամանքին, որ նշված օրենքի դրույթներին համապատասխան Մեծամոր համայնքի ավագանու կողմից սահմանված են համայնքի վարչական տարածքում գանձման ենթակա տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, այդուհանդերձ՝ նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-5.2-րդ, ինչպես նաև 7-րդ կետերով սահմանված պահանջները նախատեսված չեն,

համաձայն որոնց, համապատասխանաբար՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար նախատեսված է հարյուր հազար դրամ, իսկ բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.իսկ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ: ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար նախատեսված է քսան հազար դրամ:

Թերի է կատարվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի N09-Ն հրամանի 1-ին կետով սահմանված համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները կազմելու պահանջը (հավելվածով նշված բուժքրոջ հաստիքային միավորը որոշ մանկապարտեզներում պակաս է նախատեսվել սահմանված նվազագույնից): Բոլոր մանկապարտեզներում պակաս է նախատեսվել նաև պահակի հաստիքային միավորը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

Խախտվել է <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի <<ա>> և <<բ>> ենթակետերի պահանջները, որոնց հիմքով Մեծամոր համայնքի բյուջեում սխալ է ներկայացվել տարեսկզբի ազատ մնացորդը:

Համայնքի Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Նոր-Արմավիր, Նորապատ, Շենավան բնակավայրերում բնակչության ազդարարման համար էլեկտրաշչակներ տեղադրված չեն:

Օրակարգային չորրորդ հարցի 2022-2024 թվականների ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և իրականացվելիք աշխատանքների մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականցման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը: Ըստ որի զեկուցմամբ՝

2022 թ. սուբվենցիոն ծրագրեր

2022 թվականին Արմավիրի մարզի բոլոր 8 համայնքներից ներկայացվել և հավանության արժանացել **41** միավորված սուբվենցիոն ծրագրեր՝ **147** ենթածրագրերով, ընդգրկելով մարզի **77** բնակավայրերը՝ ավելի քան **9 մլրդ դրամ** ընդհանուր արժեքով (9,013,847,466), որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **5 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **4 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **64 մլն դրամ**:

Ըստ համայնքների պատկերն հետևյալն է.

- Արմավիր - 4 ծրագիր, 11 ենթածրագիր -1 մլրդ 265 մլն դրամ (որից կառավարություն՝ 770.7 մլն դրամ)
- Մեծամոր - 9 ծրագիր, 41 ենթածրագիր -2 մլրդ 129 մլն դրամ (որից կառավարություն՝ 1 մլրդ 223 մլն դրամ)
- Վաղարշապատ - 3 ծրագիր, 4 ենթածրագիր -604 մլն դրամ (որից կառավարություն՝ 372.8 մլն դրամ)
- Արաքս - 5 ծրագիր, 15 ենթածրագիր -735,2մլն դրամ (որից կառավարություն՝ 462.1 մլն դրամ)
- Խոյ - 8 ծրագիր, 37 ենթածրագիր -1 մլրդ 466 մլն դրամ (որից կառավարություն՝ 734.6 մլն դրամ)
- Փարաքար - 4 ծրագիր, 20 ենթածրագիր -813.2 մլն դրամ (որից կառավարություն՝ 313.3 մլն դրամ)
- Բաղրամյան - 7 ծրագիր, 18 ենթածրագիր -779.4 մլնդրամ (որից կառավարություն՝ 446.5 մլն դրամ)
- Ֆերիկ -1 ծրագիր -2.98 մլն դրամ (որից կառավարություն՝ 1.6 մլն դրամ)

20.06.2023 թ. դրությամբ իրականացվող աշխատանքների ընթացքը հետևյալն է.

- **147** ենթածրագրերից սկսվել են **136**-ի շինարարական աշխատանքները, որից՝
- ավարտված է - **88,**
- ավարտական փուլում է գտնվում – 6,
- ընթացքի մեջ է գտնվում - 42,
- դեռևս չի սկսվել -11 ենթածրագիր:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության թվով 15 որոշումներով Արմավիրի մարզպետարանին հատկացվել է **1,469** մլրդ ՀՀ դրամ գումար՝ 84 ծրագրերի պետական բյուջեի մասնաբաժնի համաֆինանսավորման համար:

Համայնքների կողմից Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա դեկտեմբերի 30-ի դրությամբ

կատարվել է մարզի 51 բնակավայրերի 81 ծրագրերի պետության մասնաբաժնի ֆինանսավորումը՝ **1,366 մլրդ ՀՀ** դրամ, կատարողականը կազմում է **93,0%:**

2023 թ. սուբվենցիոն ծրագրեր

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2023 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հավանության են արժանացել ՀՀ Արմավիրի մարզի 29 սուբվենցիոն ծրագրեր՝ 146 ենթածրագրերով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 12.61 մլրդ դրամ, որից՝

-կառավարության համաֆինանսավորումը՝ 6.98 մլրդ դրամ

-համայնքի համաֆինանսավորումը՝ 5.61 մլրդ դրամ

-մասնավորի ներդրումը՝ 9.98 մլն դրամ

Ըստ համայնքների պատկերն հետևյալն է.

- Արմավիր - 5 ծրագիր -3 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 1.37 մլրդ դրամ)
- Մեծամոր - 5 ծրագիր -4.24 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 2.45 մլրդ դրամ)
- Վաղարշապատ - 1 ծրագիր -0.76 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 0.53 մլրդ դրամ)
- Արաքս - 4 ծրագիր -1.33 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 0.89 մլրդ դրամ)
- Խոյ - 6 ծրագիր -1.78 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 0.97 մլրդ դրամ)
- Փարաքար - 3 ծրագիր -0.55 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 0.36 մլրդ դրամ)
- Բաղրամյան - 5 ծրագիր -0.94 մլրդ դրամ (որից կառավարություն՝ 0.41 մլրդ դրամ)

2023 թ. թվով 29 սուբվենցիայի ծրագրերն ընդգրկում են հետևյալ ոլորտները.

Նախադպրոցական հաստատությունների վերակառուցում/ նորոգում	7 ծրագիր	3,081.8 մլն դրամ	Արմավիր, Մեծամոր, Վաղարշապատ , Արաքս, Խոյ, Փարաքար, Բաղրամյան
Ասֆալտապատում	4 ծրագիր	2,977.5 մլն դրամ	Արմավիր, Մեծամոր, Խոյ, Բաղրամյան
Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/ նորոգում	4 ծրագիր	3,285.6 մլն դրամ	Արմավիր, Մեծամոր, Արաքս, Փարաքար
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	3 ծրագիր	1,226.7 մլն դրամ	Մեծամոր, Արաքս,

			Խոյ
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	2 ծրագիր	120.8 մլն դրամ	Մեծամոր, Բաղրամյան
Բնակավայրերի գազաֆիկացում	2 ծրագիր	1,110.7 մլն դրամ	Արաքս, Խոյ
Բնակավայրի փողոցների կառուցում/ նորոգում սալարկմամբ, խճապատմամբ	2 ծրագիր	157.7 մլն դրամ	Խոյ, Փարաքար
Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	2 ծրագիր	80.97 մլն դրամ	Խոյ, Բաղրամյան
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/ վերանորոգում	1 ծրագիր	41.1 մլն դրամ	Բաղրամյան
Այգիների, պուրակների կառուցում/ բարեկարգում	1 ծրագիր	382.5 մլն դրամ	Արմավիր
Գույքի և սարքավորումների ձեռքբերում	1 ծրագիր	142.8 մլն դրամ	Արմավիր

2023 թվականի սուբվենցիայի ծրագրի շրջանակներում ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի 36 ծրագրերից 7 ծրագրերը չեն քննարկվել միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում թերի լրամշակման կամ համաձայնեցումների գործընթացում գտնվելու պատճառով և ներառված չեն արձանագրության հավելվածներում, ուստի այդ ծրագրերը կդիտարկվեն 2024 թվականի սուբվենցիայի ծրագրի շրջանակներում:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության թվով 4 որոշումներով Արմավիրի մարզպետարանին հատկացվել է **443,916,400** ՀՀ դրամ գումար՝ 37 ենթածրագրերի պետական բյուջեի մասնաբաժնի համաֆինանսավորման համար:

Համայնքների կողմից Արմավիրի մարզպետարան ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա ս.թ. հունիսի 16-ի դրությամբ կատարվել է մարզի 7 համայնքների 28 բնակավայրերի 37 ծրագրերի պետության մասնաբաժնի ֆինանսավորումը՝ **441,604,652 ՀՀ** դրամ, կատարողականը կազմում է **99,48%:** Գործընթացը շարունակվում է:

2024 թ. սուբվենցիոն ծրագրեր

2024 թվականի սուբվենցիաներ ստանալու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 7 համայնքների 42 սուբվենցիոն ծրագրերի (153 ենթածրագրերով) նախնական հայտեր և տեխնիկական բնութագրեր:

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է **9.62 մլրդ դրամ**, որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **4.63 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **4.97 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **13.13 մլն դրամ:**

h/h	*Համայնքը*	*ծրագրերի թիվ*	*բնակավայրերի /ենթածրագրերի թիվը*	*ծրագրի ընդհանուր արժեքը (I փուլ), ՀՀ դրամ*
1	**Արմավիր**	5	9	1 768 310 000
2	**Մեծամոր**	7	43	2 225 000 000
3	**Խոյ**	6	10	826 800 000
4	**Արաքս**	13	35	1 399 679 189
5	**Բաղրամյան**	7	30	1 104 335 000
6	**Փարաքար**	3	25	1 780 000 000
7	**Վաղարշապատ**	1	1	516 000 000
	Ընդամենը	**42**	**153**	**9 620 124 189**

Համաձայն ՀՀ կառավարության 16.11.2006 թ. N 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի 10-րդ կետի պահանջի՝ ***2024 թ. սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանված մինչև 2023 թվականի նոյեմբերի 25-ը:***

Լ.Մուշեղյանը միաժամանակ տեղեկացրեց, որ ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարության 16.06.2023թ. գրությամբ ներկայացվել են նախնական հայտերի և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ ոլորտային մասնագիտացված կառույցների դիտողություններն ու առաջարկությունները, որի շրջանակում առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ առաջնահերթ լրամշակել հայտերն ու տեխնիկական բնութագրերը ներկայացված դիտողությունների հիման վրա, այնուհետև կազմել սուբվենցիայի ամբողջական

փաթեթները և հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ վերջնաժամկետ **մինչև 2023 թվականի նոյեմբերի 25-ը:**

Օրակարգային հինգերորդ հարցի՝ կանխատեսված հնարավոր սակավաջրության պայմաններում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ոռոգելի հողատարածքներում ոռոգման ջրի հնարավորիս արդյունավետ և խնայողաբար օգտագործումն ապահովող միջոցառումների մասին զեկույցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը: Նա տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ «Հիդրոօդերեվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ–ի կանխատեսումների 2023 թվականին մարզը սնուցող ջրամբարների լցվածությունը կազմելու է 65-70 տոկոս, իսկ գետերում հոսքի առավելագույն ելքերի մեծությունը սպասվում է 50-70 տոկոսի սահմաններում: Հիմք ընդունելով ներկայացված կանխատեսումների տվյալները մեզ սպասվում է սակավաջուր տարի, որը ջրօգտագործողների ընկերություններից և ջրօգտագործողներից պահանջում է մեծ ջանքեր և լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Սակավաջրության ռիսկերը մեղմելու նպատակով մարզը սպասարկող 3 ջրօգտագործողների ընկերությունները ոռոգման ջրի մատակարարման իրենց տարեկան պլանները կրճատել են մինչև 30 տոկոսով և այդ ծավալներին համապատասխան «Ջրառ» ՓԲԸ–ի հետ կնքել են ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր՝ ըստ ամիսների և ըստ տասնօրյակների: Ջրօգտագործողների ընկերությունները, ելնելով փաստացի մատակարարված ծավալներից տարածքում իրականացնում են ջրաշրջանառություն ըստ ջրանցքների և բնակավայրերի՝ նախապես տեղեկացնելով ջրօգտագործողներին: 2023 թվականի ընթացքում ջրաղբյուրներում կանխատեսվող ջրի դիֆիցիտը մասամբ լրացնելու նպատակով «ՋՕԸ»-ների կողմից ՀՀ ջրային կոմիտե են ներկայացվել առաջարկություններ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ.

Մասնավորապես

- «Էջմիածին» ՋՕԸ կողմից գործող խորքային հորերից թվով 67-ը միջին 16 ժամի փոխարեն 24 ժամով 120 օր աշխատացնելու և շահագործվող 17 խորքային հորերի պոմպերի փոխարինման դեպքում հավելյալ կարտադրվի 11,46 մլն մ^3 ջրաքանակ և հավելյալ կծախսվի շուրջ 182,6 մլն դրամի էլ.էներգիա:
- «Արմավիր» ՋՕԸ կողմից շահագործվող 10 խորքային հորերի պոմպերի փոխարինման, գործող դոտացիոն խորքային հորերը 24 ժամ , 100 օր աշխատելու դեպքում և ընկերության կողմից այժմ չշահագործվող 25 խորքային հորերը 100 օր ոռոգման նպատակով աշխատացնելու դեպքում լրացուցիչ կարտադրվի 15,84մլն մ^3 ոռոգման ջուր, որի համար լրացուցիչ կծախսվի 221,76 մլն դրամի էլ.էներգիա:

– «Շենիկ» ՋՕԸ կողմից ներկայացվել է մայր ջրանցքի վերջնամասում գտնվող գյուղերի խորքային հորերի վերականգնման աշխատանքները՝ մասնավորապես Մյասնիկյանի «Ֆերդինի հոր», «Գոմեր», «Իլյայի Արթուրի հոր», Արտամետի «Ջիվանի», Տալվորիկի «Հուշաքար» կոչվող խորքային հորերի հորատանցքի խորացման աշխատանքները:

Բոլոր ընկերությունների կողմից ուժեղացվել է հսկողությունը ջրի բաշխման և կառավարման աշխատանքների իրականացման վրա, ակտիվացել է բացատրական և տեղեկատվական աշխատանքները ջրօգտագործողների շրջանում՝ հատկապես մեծ ուշադրություն դարձնելով գիշերային ջրումներին:

Նշված իրավիճակը պահանջում է համայնքների, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների համատեղ և համաձայնեցված աշխատանք:

ՀՀ Արմավիրի մարզպետը ներկայացված զեկուցման քննարկման արդյունքներով առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ հնարավորինս արագացնել 2023թ սուբվենցիոն ծրագրերով իրականացվող խորքային հորերի վերականգնման, ինչպես նաև 2022 թվականին վերանորոգումը ավարտած հորերի շահագործման աշխատանքները, հնարավոր սակավաջրության հետևանքները մեղմելու նպատակով:

Օրակարգային վեցերորդ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքաշինության և հողաշինության բնագավառներում առկա խնդիրների մասին հայտարարությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը: Նա նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացվող քաղաքաշինական և հողաշինական փաթեթները հաճախ ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները չապահովելու և համայնքների գլխավոր հատակագծերով ամրագրված դրույթներին հակասելու պատճառով վերադարձվում են լրամշակման կամ արժանանում են բացասական եզրակացության:

Ներկայացվող փաթեթներում ներառված նյութերում բացակայում են տարածքի տեղադիրքի, հարակից հողօգտագործումների նպատակային և գործառնական նշանակության, դրանցում առկա շենքերի ու շինությունների վերաբերյալ տեղեկատվությունն ու առաջարկվող հողամասի կառուցապատման սխեմաները, առկա շինությունների նկատմամբ հակահրդեհային, սանիտարական նորմերի պահանջների և կառուցապատմանը ներկայացվող համապատասխան սահմանափակումները: Ճարտարապետահատակագծային առաջադրանքները չեն պարունակում օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակմանը ներկայացվող պարտադիր պայմաններ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը ՀՀ Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց ՀՀ կառավարության

2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հիման վրա ՀՀ քաղաքաշինության կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ կողմից մշակված և Կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները լիազոր մարմին ներկայացնել, ղեկավարվելով ՀՀ Արմավիրի մարզպետի 08,02,2022թ N 00776 շրջաբերականով համայնքներին տրամադրված ուղեցույցով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2404-Ն, 19.03.2015թ. N596-Ն, 26.06.2009թ. N 792-Ն, 10.03.2002թ. N 282-Ն որոշումներով և ՀՀՇՆ 30-01-2023 , ՀՀՇՆ 30.01.2022թ. շինարարական նորմերով:

Մարզպետը միաժամանակ տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը առաջիկայում կկազմակերպի համայնքապետարանների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների և մասնագետների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում կքննարկվեն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով քաղաքաշինական փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

Մարզպետը միաժամանակ անդրադարձավ նաև միջպետական և հանրապետական ճանապարհների օտարման գոտիներում կառուցապատման ուղղությամբ միասնական մոտեցում մշակելու և երկիր մուտք գործող ճանապարհահատվածների արտաքին տեսքը ապահովելու համար, որի վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել ՀՀ Կառավարությանը:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը օրակարգային հարցերի կապակցությամբ ընդհանուր կարգով անդրադարձավ նաև սուբվենցիոն ծրագրերի աշխատանքներին, առաջարկելով համայնքների ղեկավարներին ուշադրության կենտրոնում պահել ոլորտային պատասխանատուների գործունեությունը և հետևել աշխատանքների ընթացքին, որպեսզի մինչև շինարարական սեզոնի ավարտը աշխատանքները ավարտվեն: ՀՀ Արմավիրի մարզպետն անդրադարնալով նաև համայնքներում ազդարարման շչակների աշխատանքին և անխափան գործունեության ապահովման խնդիրներին, նշեց, որ ինչքան գործընթացը ծախսեր պահանջի և դժվարություններ ունենա, այնուամենայնիվ այն շատ կարևոր է և անհրաժեշտ է լուծել դրանց հետ կապված խնդիրները:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց նաև համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների մասնակցությանը՝ շեշտելով, որ համայնքային ծառայողների բացակայությունը վերապատրաստման դասընթացներին խիստ անընդունելի է, առաջարկելով համայնքների

ղեկավարներին՝ հետևողականություն ցուցաբերել դասընթացներին պարտաճանաչ մասնակցություն ապահովելու համար:

ՀՀ Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով նաև խաղողի մթերմանը, տեղեկացրեց, որ խաղողի մթերման հարցը գտնվում է ուշադրության կենտրում և ամենօրյա քննարկումների արդյունքում փորձում են հասկանալ, թե ինչ պլանավորումներ ունեն և ինչ հնարավորություններ կան առկա խնդիրները լուծելու համար: Մարզպետն անդրադարձավ նաև համայնքներում բնակիչներին հուզող խնդիրներին և դրանց հնարավոր լուծմանը, մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց առավել սրտացավ և ուշադիր մոտեցում ցուցաբերել ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին օրենսդրությանը համապատասխան լուծումներ տալու նպատակով:

Օրակարգային հարցերի և հայտարարությունների քննարկման ու ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.07.2023 12:50:10 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան